ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

ՀՀ ՀԻՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՄԾՍԻ-3

ք. Երևան << 29 >> դեկտեմբերի 2010 թ.

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայությունը, (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Արթուր Գրիգորյանի, ով գործում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 14-ի թիվ 1821-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության հիման վրա, և <<Հայփոստ>> ՓԲԸ վճարահաշվարկային կազմակերպությունը՝ ի դեմս գլխավոր գործադիր տնօրեն Արման Խաչատրյանի, ով գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան և այլ պայմաններ

1.1 Սույն պայմանագրում կիրառվող հասկացություններն ունեն հետևյալ իմաստը.

1.1.1. կենսաթոշակ՝ կենսաթոշակի, պատվովճարի, դրամական օգնության և սոցիալական ապահովության այլ ծրագրերով նախատեսված դրամական վճարների գումար,

1.1.2. կենսաթոշակառու՝ անձ, ում կենսաթոշակը վճարվում է կանխիկ եղանակով՝ կենսաթոշակի գումարը անձամբ նրան կամ նրա փոխարեն կենսաթոշակն ստանալու՝ օրենքով այդ իրավունքն ունեցող անձին տրամադրելու միջոցով:

1.2. Կատարողը սույն պայմանագրով պարտավորվում է իր բանկային հաշվին մուտքագրված կենսաթոշակի գումարները, ըստ Պատվիրատուի ներկայացրած՝ սույն պայմանագրի հավելված 1-ով սահմանված տվյալների (այսուհետ՝ վճարման ցուցակ), տրամադրել կենսաթոշակառուին կամ նրա փոխարեն կենսաթոշակն ստանալու՝ օրենքով այդ իրավունքն ունեցող անձին:

Վճարման ցուցակում արտացոլվում է նաև կենսաթոշակառուի փոխարեն կենսաթոշակն ստանալու՝ օրենքով այդ իրավունքն ունեցող անձի տվյալները:

1.3. Սույն պայմանագրի 1.2 կետով սահմանված ծառայությունը Կատարողը մատուցում է կենսաթոշակառուի բնակության վայրի հասցեում կամ իր սպասարկման գրասենյակում:

Կատարողը ծառայությունը մատուցում է իր սպասարկման գրասենյակում, եթե կենսաթոշակառուն Կատարողին դիմում է ներկայացրել կենսաթոշակը Կատարողի սպասարկման գրասենյակում ստանալու վերաբերյալ, կամ՝ կենսաթոշակառուն (նրա փոխարեն կենսաթոշակն ստանալու՝ օրենքով այդ իրավունքն ունեցող անձը) կենսաթոշակն ստանալու համար այցելել է Կատարողի սպասարկման գրասենյակ:

1.4. Սույն պայմանագրով սահմանված ծառայությունը Կատարողը կենսաթոշակառուին մատուցում է անվճար:

1.5. Սույն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ տեղեկատվությունը (այդ թվում՝ նախորդ ամսվա ընթացքում կենսաթոշակների վճարման արդյունքների մասին անձնավորված տեղեկատվությունը) փոխանակվում է գրավոր կարգով՝ առձեռն հանձնելու կամ փոստով ուղարկելու միջոցով, եթե Պատվիրատուն և Կատարողը (այսուհետ՝ նաև Կողմեր), փոխադարձ համաձայնությամբ, տեղեկատվության փոխանակման այլ կարգ չեն սահմանել:

1.6 Սույն պայմանագրով նախատեսված ծառայությունը Կատարողի կողմից մատուցված է համարվում նախորդ ամսվա ընթացքում կենսաթոշակների վճարման արդյունքների մասին սույն պայմանագրի հավելված 2-ով սահմանված տեղեկատվություն պարունակող փոխադարձ հաշվարկների ակտը (այսուհետ՝ փոխադարձ հաշվարկների ակտ) հաստատելու պահից:

2. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

2.1. Կատարողն իրավունք ունի.

2.1.1. սույն պայմանագրով սահմանված կարգով լուծել պայմանագիրը,

2.1.2. օրենսդրությամբ սահմանված կարգով բողոքարկել Պատվիրատուի գործողությունները և/կամ անգործությունը,

2.1.3. սույն պայմանագրով սահմանված կարգով ստանալ ծառայությունների մատուցման միջնորդավճարի գումարը:

2.2. Պատվիրատուն իրավունք ունի

2.2.1. սույն պայմանագրով սահմանված կարգով լուծել պայմանագիրը,

2.2.2. ցանկացած ժամանակ ստուգել կատարողի մատուցած ծառայությունների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու կատարողի գործողություններին,

2.2.3. Կատարողից պահանջել՝ անհապաղ վերացնել հայտնաբերված թերությունները,

2.2.4. օրենսդրությամբ սահմանված կարգով բողոքարկել Կատարողի գործողությունները և/կամ անգործությունը:

2.3 Կատարողը պարտավոր է.

2.3.1 տվյալ ամսվա կենսաթոշակի գումարը իր հաշվեհամարին մուտքագրվելու և վճարման ցուցակը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից սկսած՝ կենսաթոշակի վճարման կարգի համաձայն ապահովել ծառայության մատուցումը իր սպասարկման գրասենյակում,

2.3.2. հաստատել և կենսաթոշակառուին հասանելի եղանակով հրապարակել կենսաթոշակառուի բնակության վայրի հասցեում ծառայության մատուցման ժամանակացույց՝ կենսաթոշակը կենսաթոշակառուին տրամադրելու նպատակով կենսաթոշակառուի բնակության վայրի հասցե այցելելով առնվազն 2 անգամ (եթե առաջին այցելության արդյունքում հնարավոր չի եղել կենսաթոշակը տրամադրել կենսաթոշակառուին),

2.3.3. կենսաթոշակը տրամադրել բացառապես վճարման ցուցակ ներառված՝ կենսաթոշակառուին կամ նրա փոխարեն կենսաթոշակն ստանալու՝ օրենքով այդ իրավունքն ունեցող անձին՝ անձը հաստատող փաստաթղթի հիման վրա,

2.3.4. յուրաքանչյուր ամսվա 3-րդ աշխատանքային օրվանից ոչ ուշ Պատվիրատուին տրամադրել նախորդ ամսվա կենսաթոշակների վճարման արդյունքների մասին տեղեկատվությունը, իսկ 5-րդ աշխատանքային օրվանից ոչ ուշ՝ փոխադարձ հաշվարկների ակտը և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցել իր բանկային հաշվին փոխանցված, սակայն կենսաթոշակառուին կամ նրա փոխարեն կենսաթոշակն ստանալու՝ օրենքով այդ իրավունքն ունեցող անձին չտրամադրված կենսաթոշակների գումարը,

2.3.5. Պատվիրատուի պահանջով անձնավորված տեղեկատվություն տրամադրել կենսաթոշակը կենսաթոշակառուին կամ նրա փոխարեն կենսաթոշակն ստանալու՝ օրենքով այդ իրավունքն ունեցող անձին տրամադրելու վերաբերյալ:

2.4. Պատվիրատուն պարտավոր է՝

2.4.1. տվյալ ամսվա վճարման ցուցակը Կատարողին տրամադրելու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից ոչ ուշ Կատարողի հաշվին փոխանցել վճարման ենթակա գումարը՝ ըստ Պատվիրատուի և Կատարողի փոխադարձ համաձայնությամբ սահմանված համամասնությունների,

2.4.2. փոխադարձ հաշվարկների ակտը հաստատելու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին փոխանցել սույն պայմանագրով սահմանված ծառայությունների միջնորդավճարի գումարը:

3. Պայմանագրի գինը

Սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների համար Պատվիրատուն վճարում է Կատարողին կենսաթոշակառուներին տրամադրված կենսաթոշակի գումարի մեկ տոկոսի չափով միջնորդավճար:

1.%

4. Վեճերի լուծման կարգը

Սույն պայմանագրի կապակցությամբ վեճեր ու տարաձայնություններ առաջանալու դեպքում լուծվում են տասնհինգ օրվա ընթացքում՝ բանակցությունների միջոցով, իսկ բանակցությունների միջոցով համաձայնություն ձեռք չբերելու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Եզրափակիչ դրույթներ

5.1. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարվում են կողմերի փոխադարձ համաձայնությամբ և օրենսդրությամբ սահմանված կարգով՝ լրացուցիչ համաձայնագրեր կնքելու միջոցով, որոնք կհանդիսանան սույն պայմանագրի անբաժանելի մասը:

5.2. Սույն պայմանագիրը կազմված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկական օրինակ:

5.3. Սույն պայմանագիրը լուծվում է կողմերի փոխադարձ համաձայնությամբ կամ պայմանագիրը կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում: Պայմանագրի լուծման առաջարկությունը մի կողմը մյուս կողմին ներկայացնում է պայմանագրի լուծման նախատեսվող ժամկետից առնվազն երկու ամիս առաջ:

Պայմանագիրը լուծելու առաջարկությունը ներկայացնող կողմը պարտավոր է պայմանագիրը լուծելու մասին պատշաճ կարգով ծանուցել կենսաթոշակառուին պայմանագրի լուծման նախատեսվող ժամկետից առնվազն մեկ ամիս առաջ:

Սույն պայմանագիրը լուծվում է պայմանագրով ստանձնած պարտավորությունները ոչ պատշաճ կատարելու հետևանքով պատճառած վնասները լրիվ հատուցելու պայմանով:

5.4. Սույն պայմանագիրն իրավաբանական ուժ է ստանում կնքման պահից և գործում է անորոշ ժամկետով:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար	<<Հայփոստ>> ՓԲԸ-ի գլխավոր գործադիր տնօրեն
Արթուր Գրիգորյան	Արման Խաչատրյան

ՀԱՎԵԼՎԱԾ N 1
թիվ _____ պայմանագրի

Ցանկ
Պատվիրատուի կողմից ներկայացրած տվյալների

1. վճարահաշվարկային կազմակերպության անվանումը,

2. կենսաթոշակառուի անունը, ազգանունը (հայրանունը), անձը հաստատող փաստաթղթի սերիան ու համարը, սոցիալական ապահովության քարտի կամ սոցիալական քարտ չունենալու մասին տեղեկանքի համարը, առկայության դեպքում՝ կենսաթոշակառուի փոխարեն կենսաթոշակն ստանալու՝ օրենքով այդ իրավունքն ունեցող անձի անունը, ազգանունը (հայրանունը), անձը հաստատող փաստաթղթի սերիան ու համարը,

3. վճարման ենթակա կենսաթոշակի գումարը՝ (այդ թվում՝ տվյալ ամսվան նախորդող ժամանակահատվածի համար)՝ ըստ ժամանակահատվածի և ըստ տեսակների,

4. վճարման ենթակա ընդհանուր գումարը:

ՀԱՎԵԼՎԱԾ N 2
թիվ _____ պայմանագրի

Ցանկ
Փոխադարձ հաշվարկների ակտում ներառվող տվյալների

1. ամիսը, որի ընթացքում իրականացվել են կենսաթոշակների վճարումները,
2. կենսաթոշակ ստացած անձանց թվաքանակը՝ ըստ տեսակների,
3. վճարված կենսաթոշակի գումարը՝ ըստ տեսակների,
4. մատուցված ծառայությունների միջնորդավճարի գումարը,
5. կողմերի վավերապայմանները, կնիքները և լիազորված անձանց անունները, ազգանունները և ստորագրությունները,
6. փոխադարձ հաշվարկների ակտը կնքելու օրը, ամիսը, տարին:

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ <<ՀԱՅՓՈՍՏ>> ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-ԻՆ ԿՆՔՎԱԾ <<ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ>> ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք.Երևան **<<22>> ապրիլի 2011թ.**

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայությունը (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս Ծառայության պետ Արտեմ Ասատրյանի, ով գործում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թ. դեկտեմբերի 27-ի N 1531-Ն որոշմամբ հաստատված Ծառայության կանոնադրության հիման վրա, և <<Հայփոստ>> ՓԲ ընկերությունը (այսուհետ՝ Կատարող), ի դեմս գլխավոր գործադիր տնօրեն Արման Խաչատրյանի, ով գործում է կանոնադրության հիման, (ասյուհետ՝ Կողմեր) երկուստեք կնքված <<Կենսաթոշակների վճարման ծառայությունների մատուցման>> պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.5 և 5.1 կետերին համապատասխան, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Կողմերը որոշել են Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1.1. Պայմանագրի 1.1. կետի 1.1.1. ենթակետը <<գումար>> բառից հետո լրացնել հետևյալ բառերով.

<<(այդ թվում՝ կենսաթոշակառուի մահվան դեպքում տրվող թաղման նպաստի և կենսաթոշակառուի մահվան պատճառով չստացված կենսաթոշակի գումար)>>.

1.2 Պայմանագրի 1.2 կետը <<(այսուհետ՝ վճարման ցուցակ)>> բառերից հետո լրացնել <<մինչև տվյալ ամսվա 20-ը (ներառյալ)>> բառերով.

1.3. Պայմանագրի 1.3 կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

<<Կատարողի (նրա աշխատողի) գործողությունների կամ անգործության հետևանքով պետությանը կամ այլ անձանց պատճառած նյութական վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման>>:

1.4. Պայմանագրի 2.3 կետի 2.3.4 ենթակետում <<յուրաքանչյուր ամսվա>> բառերը փոխարինել <<կենսաթոշակի վճարումը դադարեցնելու օրվան հաջորդող>> բառերով.

2. Կատարողը կարող է Ծառայության պետի 2011 թվականի մարտի 12-ի թիվ 16-Ա հրամանով սահմանված կարգով Պատվիրատուին ներկայացնել կենսաթոշակը Կատարողի միջոցով ստանալու վերաբերյալ կենսաթոշակառուների դիմումները:

3. Կողմերը որոշել են Պայմանագրի 1.5 և 5.1 կետերին համապատասխան սահմանել Կողմերի միջև Պայմանագրով նախատեսված տեղեկատվության փոխանակության կարգը:

Սույն համաձայնագրով սահմանված էլեկտրոնային տեղեկատվությունը Կողմերի միջև փոխանակվում է Access ֆորմատով:

4. Կատարողը, կենտրոնացված կարգով, յուրաքանչյուր ամսվա 21-ից ոչ ուշ, Պատվիրատուին է տրամադրում կենսաթոշակը կենսաթոշակառուի բնակության վայրի հասցեում և Կատարողի սպասարկման գրասենյակում ստացող կենսաթոշակառուների ցանկը (տարանջատված):

5. Սույն համաձայնագրի 4-րդ կետով սահմանված տեղեկատվության հիման վրա Պատվիրատուն ձևավորում է Կատարողի միջոցով վճարվող կենսաթոշակների հերթական ամսվա վճարման ցուցակների էլեկտրոնային տարբերակը և այն տրամադրում է Կատարողին նրա պահանջով՝ առձեռն (էլեկտրոնային կրիչով):

Կատարողը սույն կետով սահմանված տեղեկատվությունը կարող է օգտագործել բացառապես կենսաթոշակների վճարման գործընթացում:

6. Պատվիրատուն, կենսաթոշակների վճարման ցուցակները ձևավորելու օրվան հաջորդող օրվանից ոչ ուշ Կատարողի տրամադրած էլեկտրոնային փոստին է ուղարկում Պատվիրատուի տարածքային ստորաբաժանումների (այսուհետ՝ Տարածքային բաժին) ցանկը, որտեղ հաշվառված են տվյալ Կատարողի միջոցով կենսաթոշակ ստացող կենսաթոշակառուներ:

7. Կենսաթոշակների վճարման ցուցակները տպագրում են Տարածքային բաժինները: Ցուցակի բոլոր էջերը Տարածքային բաժինների կողմից ստորագրվում և կնքվում են կլոր կնիքով:

Ըստ առանձին ցուցակների տարանջատվում են սոցիալական ապահովության ծրագրերով իրականացվող հետևյալ դրամական վճարների տեսակները.

7.1. պետական կենսաթոշակներ.

7.2.վետերանների պատվովճար, վետերանների և զինծառայողների դրամական օգնություն.

7.3. «ժողովրդական» կոչման արժանացած անձանց պատվովճար.

7.4. աշխատողների աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցում.

7.5. թաղման նպաստ:

Ընդ որում, կենսաթոշակառուի մահվան պատճառով չվճարված կենսաթոշակի գումարները, ըստ դրամական վճարների տեսակների, տպագրվում են առանձին ցուցակներով:

7.6 Թաղման նպաստի վճարման ցուցակները տպագրվում և հանձնվում են յուրաքանչյուր վարչական շրջանում Կատարողի մեկ փոստային բաժանմունքին: Բաժանմունքների ցանկը ներկայացվում է Պատվիրատուի կողմից տրամադրված էլեկտրոնային փոստին:

8. Եթե Կատարողը չի ներկայացնում սույն համաձայնագրի 4-րդ կետով սահմանված տվյալները, կենսաթոշակների հերթական ամսվա վճարման ցուցակները ձևավորվում են նախորդ ամսվա վճարման ցուցակները ձևավորելու համար հիմք հանդիսացած տեղեկատվության հիման վրա:

9. Պատվիրատուն, Կատարողի տրամադրած էլեկտրոնային փոստին է ուղարկում հաղորդագրություն կենսաթոշակների վճարման ցուցակները պատրաստ լինելու մասին:

Սույն կետով սահմանված հաղորդագրությունը Կատարողներին ուղարկվում է միաժամանակ:

10. Կատարողի ներկայացուցիչները, հաղորդագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից ոչ ուշ Տարածքային բաժիններից ստանում են կենսաթոշակների վճարման ցուցակները:

Կատարողը ստուգում է ցուցակի էջերի վրա ստորագրությունների և կնիքի առկայությունը և ստանում է ցուցակը՝ ստորագրելով սույն համաձայնագրի N 1 հավելվածով սահմանված՝ ցուցակների հաշվառման մատյանում:

11. Պատվիրատուն Կատարողի նշած բանկային հաշվին է փոխանցում կենսաթոշակների վճարման համար անհրաժեշտ գումարը:

12. Կենսաթոշակի գումարը տվյալ կենսաթոշակառուին տրամադրելուց հետո, Կատարողը, ցուցակի 2-րդ բաժնում (այսուհետ՝ ռեեստր) լրացնում է կենսաթոշակը վճարելու օրը և ամիսը (օօ/աա):

13. Հերթական ամսվա կենսաթոշակների վճարումը դադարեցնելուց հետո, կենսաթոշակները չվճարված լինելու յուրաքանչյուր դեպքի համար Կատարողը ռեեստրի համապատասխան տողում կատարում է <<Չվ>> նշում:

Ռեեստրում ուղղումներ կատարելու դեպքում ուղղումը հաստատվում է Կատարողի կնիքով:

14. Կենսաթոշակների վճարումը դադարեցնելու (Տարածքային բաժնից ստացած տվյալ ցուցակի հիման վրա կենսաթոշակների վճարումը դադարեցնելու համար նախատեսված ժամկետից շուտ ավարտելու դեպքում՝ վճարումն ավարտելու) օրվան հաջորդող աշխատանքային օրվանից ոչ ուշ Կատարողը տարածքային բաժին է հանձնում կենսաթոշակի վճարման ցուցակից առանձնացված ռեեստրը, իսկ վճարումը դադարեցնելու օրվան հաջորդող երրորդ աշխատանքային օրվանից ոչ ուշ՝ սույն համաձայնագրի N 2 հավելվածով սահմանված ձևի՝ կնքված փոխադարձ հաշվարկների մասին տեղեկանքը՝ երեք օրինակից:

15. Տարածքային բաժնի աշխատակիցը ստուգում է ռեեստրի բոլոր տողերի լրացված լինելը և ընդունում է ռեեստրը:

Ռեեստրը Տարածքային բաժնի կողմից ընդունվելուց լրացվում են ցուցակների հաշվառման մատյանի համապատասխան դաշտերը:

16. Տարածքային բաժինը, փոխադարձ հաշվարկների մասին տեղեկանքը ստանալու օրվան հաջորդող օրվանից ոչ ուշ, կապի ցանկացած եղանակով, Կատարողին տեղեկացնում է փոխադարձ հաշվարկների մասին տեղեկանքը կնքելու

կամ, ռեեստրով ներկայացված և փոխադարձ հաշվարկների մասին տեղեկանքում առկա տեղեկատվության միջև անճշտությունների առկայության դեպքում՝ կնքելը մերժելու մասին:

Անճշտությունները ճշտվում են ոչ ուշ, քան դրանց մասին Կատարողին տեղեկատվություն ներկայացնելու օրվան հաջորդող օրը:

Անճշտությունները ճշտվելուց հետո փոխադարձ հաշվարկների մասին տեղեկանքը կնքվում (ստորագրվում) է Տարածքային բաժնի և Կատարողի կողմից:

Տարածքային բաժինը կնքված փոխադարձ հաշվարկների մասին տեղեկանքի մեկ օրինակը պահում է իր մոտ, երկու օրինակները՝ հանձնում Կատարողին՝ տրամադրելով նաև հետ վերադարձման ենթակա գումարների մասին տեղեկանքը:

Հետ վերադարձման ենթակա գումարների մասին տեղեկանքը պարունակում է վերադարձման ենթակա գումարը՝ ըստ գանձապետական համապատասխան հաշիվների:

17. Կատարողը, իրեն հանձնված փոխադարձ հաշվարկների մասին տեղեկանքի մեկ օրինակը պահում է իր մոտ, երկրորդ օրինակը՝ փոխադարձ հաշվարկների ակտի հետ, Պայմանագրով սահմանված ժամկետներում, տրամադրում է Պատվիրատուին: Փոխադարձ հաշվարկների ակտի ձևը սահմանվում է սույն համաձայնագրի N 3 հավելվածով:

18. Կենսաթոշակների վճարման ցուցակները պահպանվում են Կատարողի մոտ հինգ տարի, որից հետո Կատարողը դրանք սահմանված կարգով հանձնում է պետական արխիվ՝ Պատվիրատուին տրամադրելով հանձնման ակտի մեկ օրինակ:

Կատարողը, Պատվիրատուի գրավոր պահանջի դեպքում, մեկ աշխատանքային օրվա ընթացքում, Պատվիրատուին է տրամադրում վճարման ցուցակի կոնկրետ էջի հաստատված ամբողջական լուսապատճենը:

19. Կատարողը սույն համաձայնագիրը կնքելուն հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է տրամադրում՝

19.1. Կատարողի անունից Տարածքային բաժնում հանդես գալու իրավասություն ունեցող անձանց ազգանունը, անունը, հայրանունը, անձնագրի սերիան և համարը, կոնտակտային տվյալները.

19.2 Կատարողի բանկային հաշվի համարները, որոնց պետք է փոխանցվեն կենսաթոշակների վճարման համար անհրաժեշտ և մատուցված ծառայությունների միջնորդավճարի գումարները.

19.3 Կատարողի էլեկտրոնային փոստի հասցեները.

19.4. Ըստ անհրաժեշտության՝ կնիքների նմուշները:

20. Սույն համաձայնագիրը կազմված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից և հանդիսանում է Կողմերի միջև կնքված Պայմանագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է համաձայնագրի մեկական օրինակ:

21. Սույն համաձայնագրի դրույթները տարածվում են Կողմերի միջև 2010թ. դեկտեմբերի 29-ին կնքված <<Կենսաթոշակների վճարման ծառայությունների մատուցման>> պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո Կողմերի միջև ծագած հարաբերությունների վրա:

22. Սույն համաձայնագիրն իրավաբանական ուժ է ստանում կնքման պահից և գործում է անորոշ ժամկետով:

23. Սույն համաձայնագիրն ուժի մեջ մտելու պահից Կողմերի միջև 2002թ. հունիսի 18-ին կնքված <<Ծառայությունների վճարովի մատուցման մասին>> պայմանագիրը և պայմանագրից բխող համաձայնագրերը ճանաչվում են ուժը կորցրած:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության պետ՝	<<Հայփոստ>> ՓԲ ընկերության գլխավոր գործադիր տնօրեն
Ա.Ասատրյան	Ա.Խաչատրյան
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
Պատվիրատուի և Կատարողի միջև
2011թ. մարտի 14-ին

Կ.Տ Կ.Տ

ՄԱՏՅԱՆ

Վճարման ցուցակների հաշվառման

Հ/Հ	Վճարատեսակը	Ցուցակի էջերի քանակը	Ցուցակը ստանալու օրը, ամիսը, տարին	Կատարողի անվանումը	Կատարողի ներկայացուցչի ԱԱՀ	Կատարողի ներկայացուցչի ստորագրությունը	Տարածքային բաժնի աշխատակցի ստորագրությունը	Ռեեստրը հանձնելու օրը, ամիսը, տարին	Կատարողի ներկայացուցչի ստորագրությունը	Տարածքային բաժնի աշխատակցի ստորագրությունը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11

Հավելված N 2
Պատվիրատուի և Կատարողի միջև
2011թ. մարտի 14-ին
կնքված համաձայնագրի

Կ.Տ Կ.Տ

ՏԵՂԵԿԱՆՔ
Փոխադարձ հաշվարկների

<<----->>--------- 201 թ.

Հ/Հ	Վճարման տեսակը	Վճարվել է	
		քանակ	գումար
1	2	3	4
1	պետական կենսաթոշակներ		
2	դադարեցված կենսաթոշակ (դեպոնենտ)		
3	թաղման նպաստ		
4	կենսաթոշակառուի մահվան պատճառով չվճարված կենսաթոշակ (ժառանգվող գումար)		
5	վետերանների պատվովճար,		
6	վետերանների և զինծառայողների դրամական օգնություն		
7	«ժողովրդական» կոչման արժանացած անձանց պատվովճար		
8	ՀՀ օրենքներով և կառավարության որոշումներով նշանակված կենսաթոշակ (դատավոր և այլ)		
9	աշխատողների աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցում		
10	ԴԱՀԿ		
	ԸՆԴԱՄԵՆԸ		

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ «ՀԱՅՓՈՍՏ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-ԻՆ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԵՎ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 22-ԻՆ ԿՆՔՎԱԾ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաք Երևան 15 դեկտեմբեր 2018 թվական

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայությունը (այսուհետ՝ նաև Պատվիրատու), ի դեմս Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության պետ Հովհաննես Սահակյանի, ով գործում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 27-ի N 1531-Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության կանոնադրության հիման վրա, և «Հայփոստ» ՓԲ ընկերությունը (այսուհետ՝ Կատարող), ի դեմս գլխավոր գործադիր տնօրենի պաշտոնակատար Հայկ Ավագյանի, ով գործում է «Հայփոստ» ՓԲ ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կողմեր), Կողմերի միջև 2010 թվականի դեկտեմբերի 29-ին կնքված «Կենսաթոշակների վճարման ծառայությունների մատուցման» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 5-րդ կետին համապատասխան կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

I. Համաձայնագրի առարկան

1. Կողմերը որոշել են Պայմանագրում և 2011 թվականի ապրիլի 22-ին կնքված՝ «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության և «Հայփոստ» ՓԲ ընկերության միջև 2010 թվականի դեկտեմբերի 29-ին կնքված «Կենսաթոշակների վճարման ծառայությունների

մատուցման» պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու և կենսաթոշակների կանխիկ վճարումն ապահովող տեղեկատվության փոխանակության կարգը սահմանելու մասին» համաձայնագրում (այսուհետ՝ 2011 թվականի ապրիլի 22-ի համաձայնագիր) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Պայմանագրի 1.1.1. կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**1.1.1. կենսաթոշակ՝** ծառայության միջոցով վճարվող՝ կենսաթոշակի, պատվովճարի, ամենամսյա պարգևավճարի, ծերության նպաստի, հաշմանդամության նպաստի, կերակրողին կորցնելու դեպքում նպաստի և սոցիալական ապահովության այլ ծրագրերով նախատեսված դրամական վճարների գումար (այդ թվում՝ կենսաթոշակառուի մահվան դեպքում տրվող թաղման նպաստի և կենսաթոշակառուի մահվան պատճառով չստացված կենսաթոշակի գումար).».

2) 2011 թվականի ապրիլի 22-ի համաձայնագրում՝

ա. ուժը կորցրած ճանաչել 2-րդ կետը,

բ. 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7. Կենսաթոշակների վճարման ցուցակները տպագրում են տարածքային բաժինները: Ցուցակի բոլոր էջերը տարածքային բաժինների կողմից ստորագրվում և կնքվում են կլոր կնիքով:

7.1 Մեկ միասնական ցուցակով տպագրվում են ծառայության միջոցով վճարվող հետևյալ դրամական վճարների տեսակները՝

1) Կենսաթոշակ, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստ,

2) «Ժողովրդական» պատվավոր կոչման արժանացած անձանց պատվովճար,

3) Հայրենական մեծ պատերազմի վետերանների պատվովճար,

4) պարգևավճար,

5) Աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման համար տրվող փոխհատուցում:

Ընդ որում՝ միասնական ցուցակում տարանջատվում են ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ արդարադատության նախարարության, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության, ՀՀ ոստիկանության, ՀՀ

ազգային անվտանգության ծառայության (այսուհետ՝ համապատասխան մարմին) համակարգի կենսաթոշակ և պարգևավճար ստանալու իրավունք ունեցող անձանց տվյալները՝ ըստ համապատասխան մարմնի և դրամական վճարի տեսակի:

7.2. Առանձին ցուցակով տպագրվում են ծառայության միջոցով վճարվող հետևյալ դրամական վճարների տեսակները՝

1) Կենսաթոշակառուի, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստառուի մահվան պատճառով չվճարված կենսաթոշակի և նպաստի գումար,

2) Կենսաթոշակառուի, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստառուի մահվան դեպքում, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ այլ անձի մահվան դեպքում տրվող թաղման նպաստ:

Ընդ որում, թաղման նպաստի վճարման ցուցակները տպագրվում և հանձնվում են յուրաքանչյուր վարչական շրջանում Կատարողի մեկ փոստային բաժանմունքին:».

գ. N 2 հավելվածը շարադրել նոր խմագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի N 1 հավելվածի:

դ. N 3 հավելվածը շարադրել նոր խմագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի N 3 հավելվածի:

2. Կողմերը համաձայնվել են 2011 թվականի ապրիլի 22-ի համաձայնագրի N 2 և N 3 հավելվածներում՝ որպես դրամական վճարի տեսակ, ներառել նաև մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը:

II. Եզրափակիչ դրույթներ

3. Սույն համաձայնագիրը կազմված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրաքանչյուր կողմին տրվում է համաձայնագրի մեկ օրինակ:

4. Սույն համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կատարվում են կողմերի փոխադարձ համաձայնությամբ և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ լրացուցիչ համաձայնագրեր կնքելու միջոցով, որոնք կկազմեն սույն Պայմանագրի և 2011 թվականի ապրիլի 22-ի համաձայնագրի անբաժանելի մասը:

5. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում և կողմերի համար պարտադիր է դառնում կնքելու պահից և գործում է անորոշ ժամկետով:

III. Կողմերի հասցեները և ստորագրությունները

Պատվիրատու	**Կատարող**
Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայություն	«Հայփոստ» ՓԲԸ
Գտնվելու վայրը՝ **ՀՀ, քաղ. Երևան, Նալբանդյան 13**	Գտնվելու վայրը՝ **ՀՀ, քաղ.Երևան, Սարյան 22**
Հեռ. **(+374 10) 52 45 74**	Հեռ. **(+374 10) , 51-45-14**
Էլ. փոստ՝ info@ssa.am	Էլ. փոստ՝ **info@haypost.am**
	ՀՎՀՀ՝ 02507464 **ՀՀ՝ 1930003703150100**
Ծառայության պետ	«Հայփոստ» ՓԲԸ գլխավոր գործադիր տնօրենի պաշտոնակատար
Հովհաննես Սահակյան	**Հայկ Ավագյան**
---	---

Հավելված N 1
Կողմերի միջև 2018 թվականի _____-ի
_____ին կնքված համաձայնագրի

«Հավելված N 2 Կողմերի միջև 2011 թվականի ապրիլի 22-ի համաձայնագրի»

ՏԵՂԵԿԱՆՔ
Փոխադարձ հաշվարկների
201 ___ թվականի_____ամսվա կանխիկ վճարումների

_____ «_____»_____ 201 __թ.

ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ տարածքային բաժնի անվանում

Հ/Հ	Դրամական վճարի տեսակը	Վճարվել է	
		Քանակ	Գումար
1	2	3	4
1.	Կենսաթոշակ և ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստ		
2.	Կենսաթոշակառուի, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստառուի մահվան պատճառով չվճարված կենսաթոշակի և նպաստի գումար		
3.	Կենսաթոշակառուի, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստառուի, ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ այլ անձի մահվան դեպքում տրվող թաղման նպաստ		
4.	ՀՄՊ վետերանների պատվովճար		
5.	Զինծառայողներին և նրանց ընտանիքների անդամներին տրվող պարգևավճար		
6.	«Ժողովրդական» պատվավոր կոչման արժանացած անձանց պատվովճար		
7.	Զոհված՝ հետմահու «Հայաստանի ազգային հերոս» ՀՀ բարձրագույն կոչում ստացած կամ Մարտական խաչ շքանշանով պարգևատրված անձի ընտանիքին տրվող պարգևավճար		
8.	Աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման համար տրվող փոխհատուցում		
9.	Համապատասխան մարմինների (ուժային կառույցների) կողմից նշանակվող զինվորական կենսաթոշակներ		
10.	Համապատասխան մարմինների (ուժային կառույցների) համակարգերի զինծառայողներին և նրանց ընտանիքների անդամներին տրվող պարգևավճար		
11.	Համապատասխան մարմինների (ուժային կառույցների) համակարգերի կենսաթոշակ և պարգևավճար ստացող անձանց մահվան պատճառով չվճարված գումար		
12.	Համապատասխան մարմինների (ուժային կառույցների) համակարգերի կենսաթոշակ ստացող անձանց մահվան դեպքում տրվող թաղման նպաստ		
13.	Մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստ		
Ընդամենը			

Տարածքային բաժնի պետ՝

_____
(անուն, ազգանուն, ստորագրություն)

Կ.Տ

«Հայփոստ» ՓԲԸ իրավասու անձ՝

_____
(անուն, ազգանուն, ստորագրություն)

Կ.Տ

Հավելված N 2
Կողմերի միջև 2018 թվականի _____-ի
_____ին կնքված համաձայնագրի

«Հավելված N 3 Կողմերի միջև 2011 թվականի ապրիլի 22-ի համաձայնագրի»

ԱԿՏ
ՓՈԽԱԴԱՐՁ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ

«Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից 20 ___թ. _____ամսվա ընթացքում իրականացված վճարումների արդյունքների մասին

Հ/Հ	Դրամական վճարի տեսակը	Ֆինանսավորված գումարի չափը	Վճարված գումարի չափը		Ծառայության միջնորդավճար	
			քանակ	գումար	տոկոս	գումար
1	2	3	4	5	6	7
1.	Կենսաթոշակ և այլ վճարատեսակներ					
	որից՝ համապատասխան մարմիններ (ուժային կառույցներ)					
2.	Թաղման նպաստ					
3.	Մահվան պատճառով չվճարված գումար	×				
4.	«Ժողովրդական» պատվավոր կոչման արժանացած անձանց պատվովճար					
5.	Զոհված՝ հետմահու «Հայաստանի ազգային հերոս» ՀՀ բարձրագույն կոչում ստացած կամ Մարտական խաչ շքանշանով պարգևատրված անձի ընտանիքին տրվող պարգևավճար					
6.	Մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստ					
Ընդամենը						

ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ

_____
(անուն, ազգանուն, ստորագրություն)

Կ.Տ

«ՀԱՅՓՈՍՏ» ՓԲԸ

_____
(անուն, ազգանուն, ստորագրություն)

Կ.Տ.

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ «ՀԱՅՓՈՍՏ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-ԻՆ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԵՎ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 22-ԻՆ ԿՆՔՎԱԾ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «21» մարտի 2019 թվական

Սոցիալական ապահովության ծառայությունը (այսուհետ՝ նաև Պատվիրատու), ի դեմս Ծառայության պետի պարտականությունները ժամանակավոր կատարող Ա. Պարոնյանի, ով գործում է «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» ՀՀ օրենքի և Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2018 թվականի հունիսի 14-ի «Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայության կանոնադրությունը հաստատելու մասին» N 74-Լ հրամանով հաստատված Սոցիալական ապահովության ծառայության կանոնադրության հիման վրա և «Հայփոստ» ՓԲ ընկերությունը (այսուհետ՝ նաև Կատարող), ի դեմս գլխավոր գործադիր տնօրեն Հայկ Ավագյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կողմեր), Կողմերի միջև 2010 թվականի դեկտեմբերի 29-ին կնքված «Կենսաթոշակների վճարման ծառայությունների մատուցման» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 5.1. կետին համապատասխան կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

I. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1. Կողմերը որոշել են Պայմանագրում և 2011 թվականի ապրիլի 22-ին կնքված «Սոցիալական ապահովության ծառայության և «Հայփոստ» ՓԲ ընկերության միջև 2010 թվականի դեկտեմբերի 29-ին կնքված «Կենսաթոշակների վճարման ծառայությունների մատուցման» պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու և Կենսաթոշակների կանխիկ վճարումն ապահովող տեղեկատվության փոխանակության կարգը սահմանելու մասին» համաձայնագրում (այսուհետ՝ 2011 թվականի ապրիլի 22-ի համաձայնագիր) կատարել հետևյալ փոփոխությունը.

1) Պայմանագրի 2.3.2. կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2.3.2. կենսաթոշակը կենսաթոշակառուին տրամադրելու նպատակով կենսաթոշակառուի բնակության վայրի հասցե այցելել առնվազն 2

սնգամ (եթե առաջին այցելության արդյունքում հնարավոր չի եղել կենսաթոշակը տրամադրել կենսաթոշակառուին).»:

II. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

2. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից և համարվում է Կողմերի միջև կնքված Պայմանագրի և 2011 թվականի ապրիլի 22-ի համաձայնագրի անբաժանելի մասը:

3. Սույն համաձայնագիրը կազմված է հայերեն լեզվով, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

III. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

4. Սույն համաձայնագիրը կարող է փոփոխվել կամ լրացվել միայն Կողմերի համաձայնությամբ:

5. Կողմերի պատասխանատվությունը որոշվում է ՀՀ գործող օրենսդրությամբ:

6. Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Բանակցությունների միջոցով համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

IV. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սոցիալական ապահովության ծառայություն	«Հայ փոստ» ՓԲ ընկերություն
Գտնվելու վայրը՝ ՀՀ, քաղ. Երևան, Նալբանդյան 13	Գտնվելու վայրը՝ ՀՀ, քաղ.Երևան, Սարյան 22
Հեռ. (+374 10) 52 45 74	Հեռ. (+374 10) 51 45 14
Էլ. փոստ՝ info@ssa.am	Էլ. փոստ՝ info@haypost.am
ՀՎՀՀ՝ 02505511	ՀՎՀՀ՝ 02507464
Ծառայության պետի պարտականությունները ժամանակավոր կատարող՝	Հայ փոստ» ՓԲ ընկերության գլխավոր գործադիր տնօրեն
Արայիկ Պարոնյան	**Հայկ Ավագյան**